ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N « ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4»

ք. Երևան « 6 » մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արամ Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Շին նախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Փառանձեմ Սուքիասյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության՝ ՍԶ « N » զ/մ 4-րդ ՍՈՒ պահեստների և սանհագույցի կառուցման, ՍԶ « N » զ/մ 11-րդ ՍՈՒ օբյեկտի կապիտալ վերանորոգման, « M » վարչության շենքի աշխատասենյակների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է **720 000 (Յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 *Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝*

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե	**« Շին նախագիծ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3	**Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Բուրաստան, Զարենցի 2**
Հ/Հ 900011301067	**Հ/Հ 2479929399490000**
ՀՀ ՖՆ գանձապետական գործառնական վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ, «Արտաշատ 2» մ/6**
ՀՎՀՀ 02565827	**ՀՎՀՀ 04225682**
Աշխատակազմի ղեկավար	**Տնօրեն**
Ա. Մկրտչյան	Փ. Սուքիասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված 1
«6»03. 20 17 թ. կնքված «ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4»
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության՝ ՍԶ «Ն» զ/մ 4-րդ ՍՈՒ պահեստների և սանհագույցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ

Չափա բաժին Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
1	ՍԶ «Ն» զ/մ 4-րդ ՍՈՒ պահեստների և սանհագույցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	Պահեստների և սանհանգույցների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում Ընդհանուր մակերեսը՝ 60քմ, բարձրությունը՝ 3.0մ, օբյեկտը գտնվում է Երևանից 230կմ հեռավորության վրա:
	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	*Հիմնավորում* ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հայտ՝16.11.2016թ թիվ 20/822 և ՀՀ ԿԱ ԱԱԾ Տնտվ՝ 2017թ գնումների պլան *Նորմատիվային պահանջներ* - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> - ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» և այլն:
	Նախագծման փուլերը	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: 1. **Աշխատանքային նախագիծ՝** «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր»
	Նախագծի կազմը	**Աշխատանքային նախագծի կազմում՝** ա) ելակետային տվյալներ -- ճարտարապետահատակագծային առաջադրանք, բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ՝ շինարարության տևողության հաշվարկով ե) գլխավոր հատակագիծ, ճարտարապետական և կոնստրուկտորական մաս, ճարտարապետական, շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով, է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ

4	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի, Պատվիրատուի, ՀՀ պաշտպանության նախարարության, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում, **ըստ անհրաժեշտության ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության** ձեռքբերում և պարզ փորձաքննության ապահովում: Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 7 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:
Աշխատանքների կատարման ժամկետը		
Սկիզբը		Ավարտը
Պայմանագրի կնքման օրվանից		10.03.2017թ

«ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության՝ ԱԶ «Ն» զ/մ 11-րդ ՍՈՒ օբյեկտի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ

Չափաբաժին Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
3	ԱԶ «Ն» զ/մ 11-րդ ՍՈՒ օբյեկտի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	Օբյեկտի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում N1 Արտաքին չափ՝ 40x12.56մ, բարձրությունը՝ 3.0մ N2 Արտաքին չափ՝ 19x16մ, բարձրությունը՝ 2.5մ, N3 Արտաքին չափ՝ 20x6մ, բարձրությունը՝ 2.8մ Ցանկապատ՝ 350գծմ, h=2-2.5մ Օբյեկտը գտնվում է Երևանից 400կմ հեռավորության վրա:
	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	*Հիմնավորում* ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հայտ՝16.11.2016թ թիվ 20/822 և ՀՀ ԿԱ ԱԱԾ ՏնտՎ՝ 2017թ գնումների պլան *Նորմատիվային պահանջներ* - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» - ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որ.

		«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» և այլն:
	Նախագծման փուլերը	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: 2. **<u>Աշխատանքային նախագիծ</u>՝** «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր»
	Նախագծի կազմը	**Աշխատանքային նախագծի կազմում՝** ա) ելակետային տվյալներ -- ճարտարապետահատակագծային առաջադրանք, բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ՝ շինարարության տևողության հաշվարկով ե) գլխավոր հատակագիծ, ճարտարապետական և կոնստրուկտորական մաս, ճարտարապետական, շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով, է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ
4	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի, Պատվիրատուի, ՀՀ պաշտպանության նախարարության, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում, **ըստ անհրաժեշտության ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության** ձեռքբերում և պարզ փորձաքննության ապահովում: Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 7 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:

Աշխատանքների կատարման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Պայմանագրի կնքման օրվանից	10.03.2017թ

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության «Մ» վարչության շենքի աշխատասենյակների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ

Չափաբաժին Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
6	«Մ» վարչության շենքի աշխատասենյակների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	Աշխատասենյակների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում Աշխատասենյակների ընդհանուր մակերեսը՝ 52.0քմ, բարձրությունը 3.0մ Օբյեկտը գտնվում է Երևան քաղաքում
	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	*Հիմնավորում* ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության հայտ՝16.11.2016թ թիվ 20/822 և ՀՀ ԿԱ ԱԱԾ ՏնտՎ՝ 2017թ գնումների պլան *Նորմատիվային պահանջներ* - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» - ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որ. <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> և այլն:
	Նախագծման փուլերը	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: 3. **Աշխատանքային նախագիծ՝** «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր»
	Նախագծի կազմը	**Աշխատանքային նախագծի կազմում՝** ա) ելակետային տվյալներ -- ճարտարապետահատակագծային առաջադրանք, բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ՝ շինարարության տևողության հաշվարկով ե) գլխավոր հատակագիծ, ճարտարապետական և կոնստրուկտորական մաս, ճարտարապետական, շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով, է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ

4	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի, Պատվիրատուի, ՀՀ պաշտպանության նախարարության, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում **պարզ փորձաքննության** ապահովում: Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 7 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:
Աշխատանքների կատարման ժամկետը		
Սկիզբը		Ավարտը
Պայմանագրի կնքման օրվանից		10.03.2017թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
Հ/Հ 900011301067
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

« Շին նախագիծ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Բուրաստան, Չարենցի 2
Հ/Հ 2479929399490000
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Արտաշատ 2» մ/ճ
ՀՎՀՀ 04225682

Տնօրեն՝

_____ **Փ. Սուքիասյան**
(ստորագրություն)

Հավելված 2
«6» 03.2017 թ. կնքված «ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4»
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Նախատեսվում է գնել 2017 թվականին, ընդ որում՝				Ընդամենը
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6
ՍՀ <N> գ/մ 4-րդ ՍՈՒ պահեստների և սանհագույցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	220 000	220 000	220 000	220 000	220 000
ՍՀ <N> գ/մ 11-րդ ՍՈՒ օբյեկտի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	280 000	280 000	280 000	280 000	280 000
<M> վարչության շենքի աշխատասենյակների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	220 000	220 000	220 000	220 000	220 000
Ընդամենը					**720 000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական փուն թիվ 3
Հ/Հ 900011301067
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

« Շին նախագիծ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Բուրաստան, Չարենցի 2
Հ/Հ 2479929399490000
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Արտաշատ 2» մ/ճ
ՀՎՀՀ 04225682

Տնօրեն՝
_____ **Փ. Սուքիասյան**
(ստորագրություն)

Հավելված 3
«6» 03. 2017 թ. կնքված «ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4»
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«6» 03. 2017 թ. կնքված «ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4»
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 10
«ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4

(պայմանագրի կատարման ապահովում)

գ. Բուրաստան « 03» մարտ 2017 թ.

«Շին նախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Փառանձեմ Սուքիասյանի « ՆՔ. 007781289 տրված 18.01.2016թ», որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1.ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության՝ ՍԶ «Ն» զ/մ 4-րդ ՍՈՒ պահեստների և սանհագույցի կառուցման, ՍԶ «Ն» զ/մ 11-րդ ՍՈՒ օբյեկտի կապիտալ վերանորոգման, «Մ» վարչության շենքի աշխատասենյակների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման **ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01** ծածկագրով պարզեցված գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Շին նախագիծ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ գ. Բուրաստան, Չարենցի 2
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Արտաշատ 2 » մ/ճ,
Հ/Հ 2479929399490000
ՀՎՀՀ 04225682
տնօրեն՝ Փ. Սուքիասյան

04225682 "ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ" "СТРОЙ ПРОЕКТ" "CONSTRUCTION PROJECT"

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Շին նախագիծ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ « Արդշինբանկ» ՓԲԸ, «Արտաշատ 2 » մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ 2479929399490000

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 04225682

7. Վճարողի ՀՇՀ՝

8. Շահառու՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե

9. Շահառուի ՀՎՀՀ՝02565827

10.Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/900005000758

12.Գումարը թվերով և բառերով՝ 72 000 /յոթանասուներկու հազար/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ/AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում՝ տուժանքի ձևով

15.Պայմանագրի ծածկագիրը՝ «*ՀՀ ՔՊԿ-ՊԸԱՇՁԲ-17/01-4*»

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	19.ա. Շահառուի ստորագրություն /_____/ /_____/ 19.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*